Հաստատում եմ

ԵԳՊԱ ռեկտոր_____Ա. Իսաբեկյան

«15» մայիսի 2008թ.

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Սույն ընթացակարգի համար հիմք են հանդիսանում «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի և 21-րդ հոդվածի 9-րդ կետի պահանջները, ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարի 2006թ. N740-Ն հրամանը՝ ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության կարգի վերաբերյալ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի սապիրանտուրայում կարող է սովորել դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի դիպլոմ ունեցող անձը գիտահետազոտական աշխատանք կատարելու, թեկնածության թեզ պաշտպանելու և արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան ստանալու նպատակով:

1.2 Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ասպիրանտուրայում ուսուցման ձևը՝ առկա, հեռակա:

1.3 Ասպիրանտուրայի ընդունելության տեղերը հաստատում է ՀՀ կառավարությունը:

1.4 Ակադեմիան զանգվածային լրատվության միջոցով հայտարարություն է տալիս ասպիրանտուրայի ընդունելության և տեղերի վերաբերյալ:

2. Ասպիրանտուրայի ընդունելության կազմակերպման ընթացակարգը

2.1 Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմումը տրվում է ռեկտորի անունով: Դիմումին կցվում են հետևյալ փաստաթղթերը.

- բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները,
- կատարված գիտական աշխատությունների, գյուտերի, հայտնագործությունների կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ, առնվազն 20 մեքենագրած էջի սահմաններում,

- եթե հանձնված են որակավորման քննություններ, ապա՝ դրանց վկայականները,

-կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և երեք լուսանկար (3x4 չափի)

- ընդունվողն անձնագիրն ու բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ:

2.2 Ասպիրանտուրա ընդունվողին ընդունելության քննություններին թույլատրություն տալիս է ակադեմիայի ընդունող հանձնաժողովը՝ ներկայացված ռեֆերատի, գյուտերի, հայտնագործությունների, հրատարակված գիտական հոդվածների վերաբերյալ ակադեմիայի արվեստի տեսության և պատմության ամբիոնի կողմից գրավոր դրական գրախոսականի դեպքում:

2.3 Ակադեմիայի ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ասպիրանտուրայի ընդունող հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են ուսումնա-գիտական գծով պրոռեկտորը, դեկանները, գիտքարտուղարը, որոշ ամբիոնների վարիչներ:

2.2 Ասպիրանտուրայի դիմորդը ավարտական տարվա ընթացքում հանձնում է օտար լեզվից, ինորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքներ ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված կարգով:

2.3 Օտար լեզվից, ինֆորմատիկայից և համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքների արդյունքները գործերը հանձնելիս ներկայացվում են ակադեմիայի ընդունող հանձնաժողովին:

2.4 Ռեկտորի հրամանով ընդհանուր արվեստի պատմություն մասնագիտական առարկայի ընդունելության քննության համար ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում ընդգրկվում են տվյալ մասնագիտության գծով դոկտորի գիտական աստիճան ունեցող դասախոսները:

2.5 Մասնագիտական քննությանը ընդունող հանձնաժողովը թույլ է տալիս դիմորդին եթե՝

ա) հանձնել է օտար լեզվից և ինֆորմատիկայից ու համակարգչից օգտվելու հիմունքներից տարբերակված ստուգարքները և ունի դրական արդյունքներ (հաղթահարել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից սահմանված նվազագույն շեմը),

բ) ներկայացրել է հրատարակված գիտական աշխատանք կամ ռեֆերատ (առնվազն 20 տպագրական էջի սահմաններում) մասնագիտական ամբիոնի դրական գրախոսությամբ:

2.6 Մասնագիտական քննության ժամանակացույցը հաստատում է ընդունող հանձնաժողովը քննությունն սկսելուց մեկ շաբաթ առաջ և այդ մասին տեղեկացնում ՀՀ ԿԳ նախարարությանը:

2.7 Մասնագիտական առարկայից 8-12 միավոր ստացած դիմորդը զրկվում է ասպիրանտուրա ընդունվելու իրավունքից:

2.8 Հարգելի պատճառով մասնագիտական քննությանը դիմորդի չներկայանալու դեպքում սահմանվում է նոր ժամանակացույց՝ պահպանելով սահմանված վերջին ժամկետը և այդ մասին լրացուցիչ տեղեկացնում ՀՀ ԿԳ նախարարությանը:

3. Քննական ծրագիրն ու մասնագիտական քննության անցկացումը

3.1 Մասնագիտական քննության հարցաշարը (առնվազն 100 հարց) կազմում է մասնագիտական ամբիոնը, հաստատում ռեկտորը և տրամադրում դիմորդներին:

3.2 Հարցաշարի հիման վրա քննական հանձնաժողովի նախագահը քննությունից 5 օր առաջ կազմում է քննական առնվազն 25 հարցատոմս:

3.3 Մասնագիտական առարկայի քննությունը անց է կացվում բանավոր և գնահատվում 20 բալանոց համակարգով: 8-12 գնահատականը հավասարեցվում է «բավարար» գնահատականին: Մասնագիտական քննությունը հանձնված է համարվում, եթե դիմորդը ստացել է առնվազն «13» միավոր:

3.4 Դիմորդը քննության է ներկայանում անձը հաստատող փաստաթղթով:

4. Մրցույթի անցկացումը

4.1 Ընդունող հանձնաժողովը քննարկում է մրցույթի արդյունքները և դրանց հիման վրա կայացնում որոշում:

4.2 Մրցույթն իրականացվում է ըստ մասնագիտական քննությունից ստացած գնահատականի: Մասնագիտական քննությունից ստացած հավասար գնահատականների դեպքում հաշվի են առնվում հետևյալ ցուցանիշները ըստ հերթականության՝

ա) օտար լեզվից և ինֆորմատիկայից ու համակարգչից օգտվելու հիմունքների տարբերակված ստուգարքներից ստացած գնահատականները (գումարային ձևով),

բ) հրատարակված գիտական աշխատանքների քանակը,

գ) մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի ներդիրում գրանցված բոլոր գնահատականների միջինը,

դ) մագիստրոսական ավարտական աշխատանքի պաշտպանության և դիպլոմավորված մասնագետի դիպլոմային աշխատանքի գնահատականը,

ե) միջազգային կամ հանրապետական ուսանողական առարկայական մրցույթներում կամ օլիմպիադաներում ստացած դիպլոմները կամ միջազգային գիտաժողովներում մասնակցությունը (զեկուցումները):

Ռեկտորը ընդունող հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա, եթե առարկություն չունի հրամանագրում է մրցութային հիմունքներով ասպիրանտուրա ընդունվածներին և կնքում պայմանագիր: